

# ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ

*b h*

## ԳՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Histoire des anciens Armeniens par Noël Dolens et A. Khatsch. Հին Հայոց պատմութիւն. Նօէլ Դոլենս և Ա. Խաչ. Հրատարակութիւն Եւրոպայի Հայ Ռւսանողական Միութեան. Ժըն, 1907, Գինն է 1 ր.

**Վ**երջին տարիներում շատ մեծ կարիք է զգացւում հայոց պատմութեան համար նոր գասագիւր ունենալու, որովհետեւ Պալասանեանի հայոց պատմութիւնը այլ ևս չեւ համապատասխանում ժամանակակից պատմագիտութեան պահանջներին։ Այս առածո վերաբերում է յատկապէս այդ պատմութեան նախնական շրջաններին մընչեւ հայերի գարձը IV. գարի սկզբին։ Եւ ահա ներկայ աշխատութիւնը գալիս է այդ մեծ պահանջին բաւարարութիւն առաջ է հեղինակները կանգնած են առարկայական գիտական հողի վրայ և մերժել են այն ամենը, ինչ որ առասպել կամ աւանդութիւն պէտք է համարել։ Պատասխանի հայոց պատմութեան հրատարակման օրից շատ քանի փոխուել։ Եւրոպացի և հայ բանասէցները, կարելի է ասել, եկել են այն հաստատուն եղբակացութեան, որ Խորենացու աղբեւըները, Խորենացին ինքը և հետեաբար նաև Պալասանեանը, որ Խորենացու հետեւզութեամբ է կազմել իւր գասագիրքը, ընաւ պատմական նշանակութիւն չունին։ Օրինակ՝ հաստատուն պատմական փաստ կարելի է համարել այն, որ Ք.-ից VII դար առաջ հայերը դեռ հայաստանում չէին, որ ընդհակառակն այս երկրում ուրարտացիները կամ խալդիներն էին բնակւում, որոնք կազմել էին մի մեծ պետութիւն և դարեր շարունակ ասորեստանցւոց հետ կուռել են երեսց ինքնուրոյնութիւնը պաշտպանելու համար։ Այս ժողովրդի մասին խօսում են ոչ միայն ասորեստանցւոց արձանագրութիւնները, այլ հէնց մեր երկրում երեան եկած քնեռագրերը, որոնց ընթերցումը շնորհիւ մի քանի գերմանացի և անգլիացի գիտնականները վերջերս միայն հնարաւոր է դարձել։ Ու մեր հեղինակներն օգտուել են այդ նորագոյն աղբեւըներից։

Հայերի ծագումը, նրանց հայաստանում հաստատուիլը և նրանց քաղաքական պատմութիւնը մինչև Տրդատ Մէծն աւանդուած են այս գրքում համաձայն եւրոպացի պատմագէտների նորագոյն հետախուզութիւնների։ Խոկ այդ պատմագէտները իրենց ուսումնասիրութիւնները կատարել են յոյն, հռովմէացի և պարսիկ պատմագիրների հայերի մասին տուած կըցկուր տեղեկութիւնների հիման վրայ։ Պարզ է, որ այս պայմաններում հայոց պատմութիւն գրողը պիտի քաւականանայ օտարազգի պատմէշների չոր ու ցամաք տեղեկութիւններով, որոնք մեծ մասամբ վերաբերում են քաղաքական մի երկու խոշոր գէպքերի և պատերազմների, որով և հնարաւորութիւն չունի հայերի քաղաքակրթական պատմութիւնը գրելու, ինչ որ ամենից անհրաժեշտ բանն է։ Այս է պատճառը, որ այս ձեռնարկն էլ չէր կարող մի մեծ նորութիւն ներկայացնել։ Բայց համեմատելով Ա. Մ. Գարագաշեանի «Քննական պատմութիւն հայոց» աշխատութեան հետ՝ որոշ յառաջդիմութիւն ցոյց է տալիս։ Գարագաշեանի պատմութեան այն մասը, որը վերաբերում է ուրարդական շրջանին, բաւական հնացել էր շնորհիւ — բէլքի, նիկոլսկու և այլ գիտնականների ջանքերի։ Եւ ահա այդ մասն էլ մենք այս նոր աշխատութեան մէջ ուղղուած ենք գտնում։ Բայց գրանից այստեղ աւելի ճոխացած է այն մասը, որ վերաբերում է հայերի ծագման խնդրին։ Խոկ մնացած մասերում՝ այսինքն Արտաշիսեան հարստութեան սկզբեց մինչև Տրդատ Մէծը, համեմատելով Գարագաշեանի հետ՝ մի առանձին յառաջդիմութիւն չենք նկատում։ Միակ տարբերութիւնն այն է, որ Գարագաշեանը քննադատութեան ենթարկելով հայ աղբիւրները, յատկապէս Խորենացուն՝ չափաղանց խճողել է իւր գործը։ Գարագաշեանի գեղեցիկ աշխատութեան գործածութիւնը գալուցներում համարեալ թէ անհնար է գարձել երկու գլխաւոր թերութեան պատճառով։ Նորա անտանելի լեզուի պատճառով և շարագրութեան խառնափնթոր եղանակի։ Այս նոր ձեռնարկը զերծ է այդ երկու թերութիւններից էլ. և եթէ հայերէնի թարգմանուի՝ կարող է որոշ կրծատումներով իրեւ դասագիրք գործածուել մեր միջնակարգ գպրոցներում։

Մի խնդիր ևս, որի վրայ ցանկալի էր ուշադրութիւն դարձնել։ Վերևն ասացինք, որ այս ձեռնարկն էլ մեր պատմութեան հին շրջանից չոր ու ցամաք տեղեկութիւններ է պարունակում միայն, և որ ուրիշ կերպ էլ չէր կարող լինել, քանի որ մենք ուրիշ աղբիւրներ չենք գտել, որոնցից հին հա-

յերի քաղաքակրթական պատմութիւննեց մի բան իմանալ կարողանայինք։ Այդպիսի աղբերներ գուցէ մեզ պեղումներն ընծեռնէին, որ դեռ չեն կատարուած։ Բայց դրաննեց ինչպէս ասացինք այս ձեռնարկից գուրս են հանուած այն բոլոր առանց պելներն ու աւանդութիւնները, որոնք վերաբերում են մեր հին շրջանին և որոնք այնքան սիրելի են մեզ։ Խթէ այս ձեռնարկը իրեւ գասագիրք գործածուի, այն ժամանակ մեր աշխակերտները պիտի ստիպուած լինին իրենց ուղեղը յոգնեցնել մի քանի անուններ և մի քանի պատերազմների նկատագրութիւններ սովորելով, միւս կողմեց նոքա ոչ մի տեղեկութիւն չէին ունենայ մեր նախնական շրջանին վերաբերող առասպելներից և աւանդութիւններից, որոնք թէպէտ պատմական նշանակութիւն չունին, բայց որոնցից շատերը մեր նախնական կուլտուրայի ընօրու տարրերն են կազմում։ Այստեղ ուրեմն հարց է ծագում։ Ի՞նչպէս պէտք է անցնել մեր միջնակարգ դպրոցներում հայոց պատմութեան այդ շրջանը։ Այս առթիւ թոյլ եւ տալիս ինձ հետեւեալ կարծիքը յայտնել։ Գուցէ նպատակայարմար լինէր, որ մեր միջնակարգ դպրոցներում այս ձեռնարկի հայերէն թարգմանութիւնը որոշ կրճատումներով կրտել դաշտագիրք գործածուէր մինչեւ ուսումնական տարուայ երրորդ երկամսնեկի վերջը, իոկ մնացած երեք տմում կարելի էր աշակերտին ծանօթացնել Հայկի, Արամի, Արայի, Վահագնի, Տիգրանի և ուրիշ առասպելների բովանդակութեան հետ և միջոց տալ նրանց, որ նրանք ամեն անդամ որոշել կարողանային, թէ իրենք դիցաբանական, դիւցազնական, պատմական ընտանեկան առասպելների, թէ դոցանից ոչ մէկի, այլ մի ուեէ միտումաւոր կեղծիքի հետ գործ ունեն։ Այս ձեռով աշակերտը ոչ միայն կծանօթանայ այդ առասպելների հետ, այլ և ձեռք կըերի քննադատական հայեացք։

### Մ. Խոսթիեան

Альбертъ Вандаль-Армяне и Реформы. перев. М. Я. Алавердянцъ. С. П. 1908.

Թրանսիայի պատմաբան Ալբերդ Վանդայլի «Հայերը և տաճկակտն վերանորոգութիւնները» վերտառութեամբ զեկուցումը թարգմանել է Մ. Ալլահվերդեանը։ Առաջին անդամ՝ այդ զեկուցումը լրյս է տեսել 1897 թ. հայկական կոտորածներից յետոյ, երկրորդ անդամ 1903 թուին։